Լավություն արա՝ ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա...

ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS մայիս, 2017, N 2 (35) БАРЕГОРТС

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԻՍԿԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐՆ ՈՒՆԵ՞Ն ԵՐԿՐՈՐԴ ԿՅԱՆՔ

Լեոնիդ Ազգալդյան – 75-

Արցախյան ազատամարտում հերոսաբար մարտնչել են տարբեր տարիքի հայորդիներ՝ անչափահասներից մինչև ավագներ, անգամ ծերունիներ: Սակայն զոհված հերոսների տարելիցը նշելիս նկատվում է մի հետաքրքիր օրինաչափություն. նրանցից շատերը այսօր՝ մեր հաղթանակից ու փխրուն զինադադարից քառորդ դար անց՝ Թաթով Կրպեյանը, Վարդան Ստեփանյանը, Պետրոս Ղևոնդյանը, Նորայր Մարությանը, Վարդան Բախշյանը և այլ համալսարանականներ դեռ նոր պիտի դառնային 50 տարեկան, իսկ 1991 թ ամռանը ընկերոջ՝ Հովսեփ Հովսեփյանի հետ «Ազատագրական բանակ» և «Անկախության բանակ» ռազմական կառույցները ստեղծած ու դրանց հրամանատարությանը ստանձնած, Վարդենիսի, Քարվաճառի, Նոյեմբերյանի, Կոռնիձորի, Շահումյանի, Գետաշենի և մի շարք բնակավայրերի ինքնապաշտպանությունը կազմակերպած Լեոնիդ Ազգալդյանը հիմա կլիներ 75 տարեկան:

Այդ բացառիկ խիզախների մեջ են կենտրոնանում ազգային երազն ու հայրենիքի ոգին, ուստի նրանք՝ իրենց վարքագծով՝ օրինակելի, նկարագրով՝ բարձր ու վեհ, մեր էպոսի, միջնադարյան վիպերգերի ու հեքիաթների՝ չար ուժերի դեմ կռված ու հաղթած հերոսների նման սիրելի են և օրինակելի: Այդպիսի հերոսներ անհիշելի ժամանակներից շատ են եղել մեր հազարամյակների պատմության մեջ՝ Երվանդունիների, Արտաշիսյանների, Բագրատունիների, Ռուբինյանների արքայական ժամանակներում, 18 - 20-րդ դդ. ազատագրական կռիվներում, Սարդարապատում, Հայրենական պատերազմում, 1991 - 1994 թթ. տված ու այսօր էլ թշնամու նենգադավ հարձակումներով վերարծարծվող ու շարունակվող Արցախյան հերոսամարտում:

Անցյալ տարվա ապրիլյան իրադարձությունները, այս տարում մեր առաջնագծում ինքնապաշտպանության բանակի ռազմիկների գրեթե ամենօրյա սխրանքները մեկ անգամ ևս հաստատեցին, որ Հաջորդների համար կյանքը խմաստավորելու և մահին հերոսաբար հաղթելու լավագույն օրինակ են եղել լեգենդացած, ժողովրդի կողմից սիրված, երգերում ու ասքապատումներում, գեղարվեստական գրականության մեջ, քանդակներում արձանացած ու գեղանկարներում հավերժացած պաշտամունքի արժանացած նախորդները:

Իրական հերոսի մասին Երվանդ Օտյանը գրել է. «Ջ'ըլլալիք բաներ կը պատմվին իր մասին, որ ոչինչ են իր ըրածներուն քով»: Այդպիսի հերոս է արցախյան հերոսամարտում իրեն անմահացրած Լեոնիդ Ազգալդյանը: Մեր բոլոր հերոսներն ինքնապաշտպանության անհրաժեշտությամբ են մասնակցել պատերազմի, այլապես նրանք հողի աշխատավոր էին ու արհեստավոր, ուսանող ու գիտնական, մանկավարժ ու հանրային գործիչ: Լեոնիդ Ազգալդյանն էլ զինվոր ու հրամանատար դարձավ ծայրահեղ անհրաժեշտության թելադրանքով, մայր հայրենիքի ու հայրենի հողի կանչով, այլապես Մոսկվայի համալսարանում սովորած և զուտ ազգային առաջադեմ գաղափարների համար այնտեղից վտարված և Երևա-

նի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետն ավարտած երիտասարդն արդեն մխրճվել էր ծրագրավորման ու հաշվողական տեխնիկայի նորագույն գիտաճյուղերի մեջ և հասել շոշափելի նվաճումների: Նախքան ապագա հայկական բանակի ձևավորումը՝ նրա հիմքը կազմող 300 հոգիանոց բանակը ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերում նրա՛ իսկ պատրաստած ինքնաշեն զենքերով ու նրա՛ հրամանատարությամբ էր կռվում մեզ պատերազմ պարտադրած թշնամու դեմ: Հայոց ազատամարտերի պատմությանը նա ավելացրել է իր անջնջելի էջը՝ թշնամական գերությունից ազատագրելով 26 բնակավայր:

Մարտական ընկերների հավաստմամբ՝ նա իսկական զորահրամանատար էր, քչախոս՝ բանաձևային մտածողությամբ, խոսքը կարճ էր ու կտրուկ, աներկբա, զգաստացնող ու հավաստիացնող, ուներ կարգախոսի կշիռ ու բովանդակություն. «Սա Հայաստան է և վերջ: Ենթակա չէ ո՛չ սակարկման, ո՛չ վաճառքի, ո՛չ զիջման, ո՛չ փոխանակման»: Կատակն էլ էր շատ լուրջ. սիրում էր կրկնել. «Չհավատա՛ք, եթե ասեն, որ մահացել եմ: Ես կմեռնեմ Ստամբուլի պատերի տակ»: Բայց իր այդ խոստումը չկատարեց. 1992 թ. հունիսի 21-ին Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղի մոտակայքում նա մեզ հրաժեշտ տվեց և գնաց անմահանալու:

Հերոսի հիշատակը հավերժացնելու նպատակով ԵՊՀ մի պատկառելի պատվիրակություն մարտի 17-ին Քարվաճառով մեկնեց Արցախ: Ռեկտոր Արամ Սիմոնյանի գլխավորած պատվիրակության կազմում էին պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրենը, տարբեր ֆակուլտետների դեկաններ, «Բարեգործ» թերթի գլխավոր խմբագիրը, ԵՊՀ երիտասարդական կառույցի ղեկավար Վահագն Վարագյանը, տասնյակ ուսանողներ:

Պատվիրակությունը եղավ սահմանային Տոնաշենում, որի ազատագրության համար մղված մարտում էլ զոհվել էր Լեոնիդ Ազգալդյանը: Տպավորիչ էր ջերմ հանդիպումը առաջնագծի զինվորների հետ: Ուսանողների ուժերով տրվեց համերգ, հնչեցին զինվորներին քաջալերող, նրանց ոգին բարձրացնող բովանդակալից ելույթներ, իրար խառնվեցին ու միաձույլ դարձան ուսանողների ու զինվորների երգն ու շարային քայլերթը, արժանավորապես մեծարվեց զոհված զորահրամանատար Լեոնիդ Ազգալդյանը...

Այդ համախմբումը հենց ազգ - բանակ միասնության հետաքրքիր արտահայտություն էր՝ անջնջելի տպավորությամբ:

Պատվիրակությունը ներկա եղավ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի ընդունելությանը, եղավ Արցախի պետական համալսարանում, ուր կնքվեցին ԵՊՀ-ի հետ ուսումնագիտական համագործակցության երկարաժամկետ պայմանագրեր:

Բերձորի նախամուտքում՝ Երևան – Ստեփանակերտ մայրուղու ձախ եզրին, 75 ընկուզենիների և թթենիների տնկարկումով հիմնվեց «Լեոնիդ Ազգալդյանի անվան պուրակը»: Ծառատունկի արարողությունը բացվեց ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի՝ Լեոնիդ Ազգալդյանի մեծարման խոսքով: Նա մասնավորապես ասաց.

- Նոր սերունդները պետք է լավ ճանաչեն ու գնահատեն իրենց նախորդներին՝ մանավանդ Հայաստանի անկախության և Արցախի ազատագրության համար իրենց կյանքը զոհաբերած մեր դասախոսներին և ուսանողներին: Այսօր, բացելով Լեոնիդ Ազգալդյանին նվիրված այս պուրակը, մենք մեր հարգանքի տուրքն ենք մատուցում բոլոր հերոս նահատակներին: Լեոնիդ Ազգալդյանը մեծ ներդրում ունի մեր բանակաշինության և հաղթանակի մեջ: Նա առաջիններից էր, որ արցախյան շարժման առաջին օրերից գիտակցեց, որ Արցախի ազատագրումը ֆիդայական կռիվներով չի լուծվելու այլ անհրաժեշտ է ունենալ կանոնավոր հայկական բանակ, և ինքն էլ հայոց ազգային բանակի հիմքը դրեց: Բնավորությամբ կոշտ, խիստ ու աներեր հայ մտավորական էր նա, մեր համալսարանի ու ողջ հայության պարծանքը, որ սկզբից ևեթ համոզված էր մեր հաղթանակի մեջ և ջանք չխնայեց այդ սրբազան նպատակին հասնելու համար: Թեև նա զինվորականական կրթություն չէր ստացել, բայց նրա ռազմագիտական կարողությունների մասին հիացմունքով էին արտահայտվում մասնագետ զինվորականները: Մենք գլուխ ենք խոնարհում նրա հիշատակի առաջ, որովհետև նա Հայաստանի Երրորդ Հանրապետության բանակաշինության սկզբնավորողներից էր և զինվորական բարձրագույն կարգապահություն հաստատած նպատակասլաց հրամանատարներից մեկը:

- Սիրելի՛ ներկաներ, երեկ դուք «Եղնիկներում» տեսաք մեր հայրենիքի խաղաղությունը պաշտպանող զինվորներին: Նախագահ Բակո Սահակյանի հետ հանդիպման ժամանակ էլ հնչեց այն միտքը, որ հերոսականությունը շարունակվում է. այսօր էլ դիրքերում կանգնած են իրենց զինվորական երդմանը հավատարիմ, մարտական ցանկացած առաջադրանք ու հրաման կատարելու պատրաստ հայ զինվորներ, հայրենիքի

նվիրյալ պաշտպաններ, ովքեր հենց Ազգալդյանի երազանքն են ու նրա կյանքի շարունակությունը: Նրանք են առաջնագծի դիրքերում արալչջորեն խաղաղ պահում մեր երկու պետու-թյունների՝ միասնական Հայաստանի սահմաններն անառիկ պահում՝ արժանի հակահարված տալով թշնամու դիվերսիոն հարձակումներին ու մյուս ոտնձգություններրին: Համոզված ենք, որ նվիրյալ հերոսներ այսօր էլ կան, ծնվում են ու ծնվելու են: Բոլոր հերոսներն են արժանի հարգանքի: Հայրենիք ունի նա, ով կառչած է մայր հողին և պատրաստ է իր արյունը թափելու նրա պաշտպանության համար:

- Ես շնորհավորում եմ Լեոնիդ Ազգալդյանի ծննդյան 75-ամյակը. Հավե՞րժ փառք նրան ու բոլոր հերոսներին: Համոզված եմ, որ այս ծառերի բերքը վայելելու եք դուք և հաջորդ սերունդները: Նա մեզ հրաժեշտ է տվել 25 տարի առաջ, և այս այգին լինելու է նրա կյանքի հարատևու-թյան խորհրդանիշը: Ուրեմն իսկապես հերոսներն ունեն երկրորդ և հարատև կյանք: Այժմ խնդրենք պրոֆ. Գուրգեն Մելիքյանին՝ իր ոգեշունչ խոսքով ու աղոթքով սկսելու ծառատունկը:

Այսպես սկսվեց ծառատունկը Արցախյան ազատամարտի հերոս Լեոնիդ Ազգալդյանի ծննդյան 75-ամյակին նվիրված այգի-պուրակում:

ԱԿԱՆԱՏԵՍ

2016 Թ. ԽԵԱ ԾՐԱԳՐՈՎ ԿՈՎԵՐ ՍՏԱՑԱԾ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

Ց Ո Ւ Ց Ա Կ

հ/հ	Անուն, ազգանուն	բնակավայրը	Երեխաների թիվը	ստացած կովերը	հովանավորները	Կովի ականջի N-ը
281	Խաչատրյան Քրստինե Խաչատրյան Դավիթ	գ.Գիհուտ	5	I կով	Հայության Լևոն - Շանթ և Վիրջինյա /ԱՄՆ/	335110
282	Քյուրքչյան Աննա Գրիգորյան Սևակ	գ.Վակունիս	4	I կով	Հաղունյան Մարիետ /ԱՄՆ/	2150
283	Սարգսյան Ջեմմա Բարսեղյան Սամվել	ք..Բերձոր	6	II կով	Վարդանյան Բաբկեն, ԱՄՆ	2711
284	Սարգսյան Գայանե Ալեքսանկան Գեղամ	գ. Գողթանիկ	5	I կով	«Անահիտ» հիմնադրամ ԱՄՆ	301217
285	Ցաղուբյան Արմենուհի Ավագյան Ռոմանոս	ք. Բերձոր	5	I կով	Շահնազարյան Սարո /Մեծ Բրիտանիա?	324184
286	Խեչումյան Արթուր Խեչումյան Մերի	գ. Միրիկ	6	I կով	Հալաբի Գաբրիել, Անահիտ/ /ԱՄՆ/	325047
287	Հակոբյան Անուշ Ղուկասյան Ռուբեն	գ. Միջնավան	4	I կով	Հայկ և Փերեզա Հայրա-պետյան /ԱՄՆ/	6473
288	Պետրոսյան Կարինե Դալլաքյան Մաքսիմ	ք. Կովսական	4	I կով	Մարտիրոսյան Թիմի և Սեդիկ	305284
289	Բաղդասարյան Ելենա Բաղդասարյան Արա	գ.. Մեղվաձոր	4	I կով	Կոլոզնոմոս Ալեքսանդր և Մեդեա	332816
290	Հակոբյան Պայծառ /միայնակ/	ք. Բերձոր	4	I կով	Ջանգոզյան Վարդան և Աննա /ԱՄՆ/	325211
291	Տոնոյան Գայանե Տոնոյան Արտակ	ք.Բերձոր	6	II կով	Թումանյան Ռաֆֆի և Աստղիկ /ԱՄՆ/	5935
292	Ամիրխանյան Վեներա Հայրապետյան Վալերի	Գ.Գողթանիկ	8	I կով	Ղևոնդյան Մասիս /ԱՄՆ/	311472
293	Ստեփանյան Աննա Վարդանյան Սարգիս	Ք.Բերձոր	7	II կով	Հրազդան Մաջիդիյե /ԱՄՆ/	2489
294	Մարգարյան Նաիրա Մարգարյան Գագիկ	Գ.Վակունիս	6	I կով	Վանեցյան Կարեն և Վերոնիկա /Շվեյցարիա/	325006
295	Բեգոյան Զոյա Օսեյան Ավետիք	Ք.Բերձոր	4	II կով	Ղևոնդյան Մասիս /ԱՄՆ/	342146
296	Հովոյան Անուշ	Գ.Հերիկ	7	II կով	Եղյանց Արտուշ և	325039

	Հովոյան Գրիգոր				Հասմիկ /ԱՄՆ/	
297	Գոգորյան Կարինե Գոգորյան Մխիթար	Գ.Մուշ	7	II կով	Եղյանց Սառա /ԱՄՆ/	325083
298	Աբրահամյան Լուսինե /միայնակ/	գ.Գողթանիկ	8	I կով	Զարգարյան Վիգեն /ԱՄՆ/	324081
299	Կարապետյան Աշոտ	ք.Բերձոր	4	I կով	Գրիգորյան Ռիտա և Արփինե	5131
300	Աշկարյան Վահե /լիբանանահայ/	Գ.Իշխանաձոր	4	II կով /բացառ/	Allied West Paper Corp. /ԱՄՆ/	5187
301	Համբարձումյան Մարինե /միայնակ/	գ. Աղավնատուն	7	I կով	Փիլոսյան Վաղարշակ և Սիլվա /ԱՄՆ/	5906
302	Հովսեփյան Կարինե Ղանդիլյան Ցոլակ	ք.Բերձոր	5	I կով	Շահնազարյան Հենրիկ և Անահիտ/Շվեդիա/	5469
303	Ստեփանյան Մանյա /միայնակ/	ք.Բերձոր	4	I կով	Բորոյան Ռաֆիի և Հասմիկ /Շվեդիա/	5497
304	Հայրապետյան Գայանե Բակունց Ստյոպա	գ. Հերիկ	4	I կով	Չարչյան Դավիթ /ԱՄՆ/	5942
305	Ստեփանյան Մանյա Զաղոյան Սարգիս	Ք.Բերձոր	4	I կով	Մոխթարյան Օհաննես և Վանուշ /ԱՄՆ/	5921
306	Եղիազարյան Էդուարդ Հակոբջանյան Արաքսյա	ք.Բերձոր	4	I կով	Տեր-Սահակյան Սյուզան /ԱՄՆ/	5917
307	Մկրտիչյան Մարինե Վեյյան Հայկ	գ.Հարար	4	I կով	Հայրապետյան Արմեն և Էլյանորա /ԱՄՆ/	5967
308	Ֆրոլով Վիկտոր Սարգսյան Էլինա	Գ.Սոնասար	4	I կով	Քանյան Նիք և Մերի /ԱՄՆ/	6000
309	Խաչատրյան Գոհարիկ Գաբրիելյան Հովհաննես	գ. Հոչանց	4	I կով	Կյուրեղյան Վարուժան և Էմմա /ԱՄՆ/	5930
310	Միրումյան Աննա Հարությունյան Լյովա	գ.Աղավնո	6	I կով	Տեր-Պողոսյան Սարինե	5950
311	Վարդանյան Լուսինե Մեսրոպյան Գրիշա	գ.Միրիկ	6	I կով	Տեր-Պողոսյան Քրիստինե	325081
312	Թադևոսյան Միհրան Դիլաքյան Նազիկ	Ք.Բերձոր	4	I կով	Մեսրոպյան Սերոժ և Մեղիկ /ԱՄՆ/	5948
313	Մանուկյան Գրիգոր Աբրահամյան Կարինե	Ք.Բերձոր	Բացառութ.	I կով	Հովհաննիսյան Արկադի և Իրեն /ԱՄՆ/	5913
314	Գրիգորյան Ռոբերտ Գրիգորյան Սիրանուշ	գ. Աղավնատուն	Բացառութ.	I կով	Բալյան Հարութ – Ռաֆֆի և Փեթի /ԱՄՆ/	5956
315	Փիլոյան Արտյոմ Ծատրյան Ռոզա	ք.Բերձոր	4	I կով	Փափայանց Շիլա /ԱՄՆ/	5901
316	Ազախանովա Մարիամ /միայնակ/	ք.Միջնավան	7	I կով	Մուրադյանց Գեորգի և Օֆելյա /ԱՄՆ/	5917
317	Համբարձումյան Մարինե /միայնակ/	գ. Աղավնատուն	6	I կով	Մարգարյան Ռուբեն և Վալետին /ԱՄՆ/	5906
318	Վանյան Անուշ Հովհաննիսյան Արամ	ք.Կովսական	5	I կով	Նազարյան Արմեն Մովսեսի /ԱՄՆ/	5907
319	Ոսկանյան Արմեն Դարբինյան Նունե	գ.Արվական	6	I կով	Փիրջանյան Սուրեն /ԱՄՆ/	5946
320	Գաբրիելյան Լուսինե Հովհաննիսյան Կարո	ք.Բերձոր	6	I կով	Թորոսյան Ռուբիկ /ԱՄՆ/	5955
321	Խաչատրյան Քրստինե Խաչատրյան Դավիթ	գ.Գիհուտ	5	I կով	Հայթյան Լևոն - Շանթ և Վիրջինյա /ԱՄՆ/	335110
322	Քյուրքչյան Աննա Գրիգորյան Սնակ	գ.Վակունիս	4	I կով	Հաղունյան Մարիետ /ԱՄՆ/	2150

323	Սարգսյան Ջեմմա Բարսեղյան Սամվել	ք.Բերձոր	6	II կով	Վարդանյան Բաբկեն /ԱՄՆ/	2711	
324	Սարգսյան Գայանե Ալեքսանյան Գեղամ	գ.Գողթանիկ	5	I կով	«Անահիտ հրմնադրամ» /ԱՄՆ/	301217	
325	Յաղուբյան Արմենուհի Ավագյան Ռոմանոս	ք.Բերձոր	5	I կով	Շահնազարի Սարո /Մեծ Բրիտանիա/	324184	
326	Խեչումյան Արթուր Խեչումյան Մերի	գ.Միրիկ	6	I կով	Հալաբի Գաբրիել Անահիտ /ԱՄՆ/	325047	
327	Հակոբյան Անուշ Ղուկասյան Ռուբեն	ք.Միջնավան	4	I կով	Հայկ և Թերեզա Հայրապետյան /ԱՄՆ/	6473	
328	Պետրոսյան Կարինե Դալլաքյան Մաքսիմ	ք.Կովսական	4	I կով	Մարտիրոսյան Թիմի և Սեդիկ /ԱՄՆ/	305284	
329	Բաղդասարյան Ելենա Բաղդասարյան Արա	գ.Մեղվաձոր	4	I կով	Կոլոգնոմոս Ալեքսանդր և Մեդեա /ԱՄՆ/	332816	
330	Հակոբյան Պայծառ /միայնակ/	Ք.Բերձոր	4	I կով	Ջանգոզյան Վարդան և Աննա /ԱՄՆ/	325211	
331	Տոնոյան Գայանե Տոնոյան Արտակ	ք. Բերձոր	6	II կով	Թումանյան Ռաֆֆի և Աստղիկ /ԱՄՆ/	5935	
332	Ամիրխանյան Վեներա Հայրապետյան Վալերի	գ.Գողթանիկ	8	I կով	Ղևոնդյան Մասիս /ԱՄՆ/	311472	
333	Ստեփանյան Աննա Վարդանյան Սարգիս	ք.Բերձոր	7	II կով	Հրազդան Մաջիդիյե /ԱՄՆ/	2489	
334	Մարգարյան Նաիրա Մարգարյան Գագիկ	գ.Վակունիս	6	I կով	Վանեցյան Կարեն և Վերոնիկա /Շվեյցարիա/	325006	
335	Բեգոյան Զոյա Օսեյան Ավետիք	ք. Բերձոր	4	II կով	Ղևոնդյան Մասիս /ԱՄՆ/	342146	
336	Հովոյան Անուշ Հովոյան Գրիգոր	գ. Հերիկ	7	II կով	Եղյանց Արտուշ և Հասմիկ /ԱՄՆ/	325039	
337	Գոգորյան Կարինե Գոգորյան Մխիթար	գ. Մուշ	7	II կով	Եղյանց Սառա /ԱՄՆ/	325083	
338	Աբրահամյան Լուսինե /միայնակ/	գ.Գողթանիկ	8	I կով	Զարգարյան Վիգեն /ԱՄՆ/	324081	
339	Կարապետյան Աշոտ	ք.Բերձոր	4	I կով	Գրիգորյան Ռիտա և Արփինե /ԱՄՆ/	5131	
340	Աշկարյան Վահե /լիբանանահայ/	գ.Իշխանաձոր	4	II կով /բացառ/	Allied West Paper Corp. /ԱՄՆ/	5187	
341	Համբարձումյան Մարինե /միայնակ/	գ. Աղավնատուն	7	I կով	Փիլոսյան Վաղարշակ և Սիլվա /ԱՄՆ/	5906	
342	Հովսեփյան Կարինե Ղանդիլյան Ցոլակ	ք.Բերձոր	5	I կով	Շահնազարյան Հենրիկ և Անահիտ /Շվեդիա/	5469	
343	Ստեփանյան Մանյա /միայնակ/	ք. Բերձոր	4	I կով	Բորոյան Ռաֆիի և Հասմիկ /Շվեդիա/	5497	
344	Հայրապետյան Գայանե Բակունց Ստյոպա	գ. Հերիկ	4	I կով	Չարչյան Դավիթ /ԱՄՆ/	5942	
345	Ստեփանյան Մանյա Զաղոյան Սարգիս	ք.Բերձոր	4	I կով	Մոխթարյան Օհաննես և Վանուշ /ԱՄՆ/	5921	
346	Եղիազարյան Էդուարդ Հակոբջանյան Արաքսյա	ք.Բերձոր	4	I կով	Տեր-Սահակյան Սյուզան /ԱՄՆ/	5917	
347	Մկրտիչյան Մարինե Վեյլան Հայկ	գ.Հարար	4	I կով	Հայրապետյան Արմեն և Էլյանորա /ԱՄՆ/	5967	
348	Ֆրոլով Վիկտոր Սարգսյան Էլինա	գ.Սոնասար	4	I կով	Քանյան Նիք և Մերի /ԱՄՆ/	6000	

349	Խաչատրյան Գոհարիկ Գաբրիելյան Հովհաննես	գ. Հոչանց	4	I կով	Կյուրեղյան Վարուժան և Էմմա /ԱՄՆ/	5930
350	Միրումյան Աննա Հարությունյան Լյովա	գ.Աղավնո	6	I կով	Տեր-Պողոսյան Սարինե	5950
351	Վարդանյան Լուսինե Մեսրոպյան Գրիշա	գ.Միրիկ	6	I կով	Տեր-Պողոսյան Քրիստինե	325081
352	Թադևոսյան Միհրան Դիլաքյան Նազիկ	ք.Բերձոր	4	I կով	Մեսրոպյան Սերոժ և Մեղիկ /ԱՄՆ/	5948
353	Մանուկյան Գրիգոր Աբրահամյան Կարինե	ք.Բերձոր	բացառութ.	I կով	Հովհաննիսյան Արկադի և Իրեն /ԱՄՆ/	5913
354	Գրիգորյան Ռոբերտ Գրիգորյան Սիրանուշ	գ. Աղավնատուն	Բացառութ/	I կով	Բալյան Հարութ – Ռաֆֆի և Փեթի /ԱՄՆ/	5956
355	Փիլոյան Արտյոմ Ծատրյան Ռոզա	ք.Բերձոր	4	I կով	Փափայանց Շիլա /ԱՄՆ/	5901
356	Ագախանովա Մարիամ /միայնակ/	ք.Միջնավան	7	I կով	Մուրադյանց Գեորգի և Օֆելյա /ԱՄՆ/	5917
357	Համբարձումյան Մարինե /միայնակ/	գ. Աղավնատուն	6	I կով	Մարգարյան Ռուբեն և Վալետին /ԱՄՆ/	5906
358	Վանյան Անուշ Հովհաննիսյան Արամ	Ք.Կովսական	5	I կով	Նազարյան Արմեն Մովսեսի /ԱՄՆ/	5907
359	Ոսկանյան Արմեն Դարբինյան Նունե	Գ.Արվական	6	I կով	Փիրջանյան Սուրեն /ԱՄՆ/	5946
360	Գաբրիելյան Լուսինե Հովհաննիսյան Կարո	Ք.Բերձոր	6	I կով	Թորոսյան Ռուբիկ /ԱՄՆ/	5955

Շարունակելի

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՆԱԳՈՒՅՆ ԲԱՐԵՐԱՐԻ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԱՆԴԱՄԻ ՀԵՏ

Լուսանկարում նա ինքն է՝ Վարուժան Կյուրեղյանը, զավակը իր հերոսական ու ողբերգական ճակատագրով հայտնի մի գերդաստանի, որի զավակների կյանքը համակ նվիրում ու մաքառում է եղել հայոց պատմության վերջին ավելի քան մեկդարյա ժամանակաշրջանում: Հայրը 20-րդ դարի առաջին տասնամյակներում Հայաստանի ազատագրության և հայոց արժանապատվության համարմղված գրեթե բոլոր ճակատամարտերի մասնակից Երվանդ Կյուրեղյանն էր: Վանի հերոսական ինքնապաշտպանությունից մինչև հեծելազորային հիսնապետի կարգավիճակով քաջաբար մարտնչում Սարդարապատի ճակատագրական ճակատամարտում՝ մեզ բնաջնջելու եկած թուրքական նվաճողների դեմ, Հայաստանի Առաջին Հանրապետության ժամանակշրջանում մեր հայրենիքը օտար մոլախոտերից մաքրելու պետական հանձնա-ռարություն: Սակայն Հայաստանի Առաջին Հանրապետության անկումից ու երկրի խորհրդայնացումից հետո բոլշևիկների բոլշևիկների հաշվեհարդարից խուսափելու անհրաժեշտությամբ նա հարկադրված եղավ անցնել Պարսկաստան, այնտեղից էլ Ամերիկա, ապրեզ Հայաստանի կարոտով, ապրեց երկա՜ր՝ պատմական արդարության հաղթանակը տեսնելու հույսով: 1979 թ. նա որպես տուրիստ իր հայրենիքը գալու գալու արտոնություն ստացավ: Եկավ ընտանիքով՝ կնոջ ու զավակների հետ, որոնց մեջ էր նաև Վարուժանը, եկավ հանդիպելու հայ մտավորականությանը և մասնավորապես բանաստեղծ Հովհ. Շիրազին, շրջելու իր մասնակցությամբ ճակատամարտերի վայրերում, վերհիշելու Սարդարապատի ճակատամարտի մանրամասները և զավակներին կապելու Հայաստանի ապագայի հետ: 112 տարեկանում նա ավարտեց ,Իմ հուշերի ճանապարհով խորագրով հուշագիրքը, որ սկզբնաղբյուրային բացառիկ արժեք ունի: Ակդ գիրքն ընթերցողը ոչ միայն պատկերացում կունենա վերջին հարյուրամյակի հայոց պատմության մի շարք կարևոր իրադարձու-

թյունների մասին, այլև նրանով կարող է ճշգրտել խորհրդային պատմագիտության աղավաղումները: Կարող է հասկանալ ծնողական դաստիարակության արժեքը և ճանաչել հենց Վարուժան Կյուրեղյանին, ով Լոս Անջելեսի հայ համայնքում «Focus on children» կազմակերպության հիմնադիրներից է, հեղինակավոր մի անձնավորություն, որ ծավալում է հայաստանամետ գործունեություն՝ շարունակելով կենսագործել հայրենանվիրության հայրական պատգամները: 85-ամյա Վարուժան Կյուրեղյանը նորերս է ընտրվել «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհրդի անդամ: Նա վերջերս դարձյալ ԱՄՆ-ից Հայաստան էր եկել՝ բարեգործական ծրագրեր իրականացնելու:

Օգտվելով նրա Երևանում գտնվելուց՝ որոշեցինք նրա հետ հարցազրույցը ներկայացնել «Բարեգործի» ընթերցողներին:

Բարեգործ. – Պարոն Կյուրեղյան, թույլ տվեք Ձեզ ու մեզ շնորհավորել „Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի հոգաբարձության խորհրդի անդամ ընտրվելու առթիվ: Գիտենք, որ դա պարտավորեցնող է, բայց Դուք այն որպես Ձեր գործունեության ու վաստակի գնահատում-պատվոգի՞ն եք ընդունում, թե՞ նոր պատասխանատվություն Ձեր առանց այն էլ բազմազբաղ ժամանակի ու բարեխղճության համար:

Կյուրեղյան.- Ե՛վ մեկը, և՛ մյուսը: Ավելի շատ՝ երկրորդը, որովհետև անելիքները շա՜տ-շատ են, իսկ մի մարդու, թեկուզ ամենակարողի, ժամանակն ու հնարավորությունները՝ խիստ սահմանափակ: Մանավանդ Հայաստանի և Արցախի պարագայում երբեք չեմ զլացել և չեմ ուզենա պարտք մնալ: Ինչպե՞ս էր Հովի. Շիրազի այն քառյակը, որ մատնացույց արիք անցյալ նոյեմբերին «Սիփանի» սրահում դրամահավաքի ժամանակ. դա կարևոր պատգամախոսություն է՝ ուղղված ոչ միայն ինձ: Թեև դա մոռանալու բան չէ, բայց նորի՛ց հիշեցրու, խնդրում եմ. Իմ մայր ազգին թեկուզ ինքս...

Թ. - Լավ էլ հիշում եք: Հիմա ամբողջացնենք.

Իմ մայր ազգին թեկուզ ինքս մոր պես ծնած լինեի,
Աստվածային ամբրոսների կաթով սնած լինեի,
Ես լինեի թեկուզ ծնած անմահությունն իմ հայոց,-
Էլի՛ պիտի պարտք մնայի՝ թեկուզ Աստված լինեի:

Կ. – Իսկապես պարտավորեցնող կարգախոս է: Դա հորս և իմ կյանքի ապրելու բանաձևն է և պիտի լինի բոլոր հայորդիներինը, բայց մենք ապրել ենք առանց բանաստեղծական այս բանաձևն իմանալու նչա խոչհուրդը կիրառելով: Հորս կենսագրության ծանոթ եք, նրա *«Իմ հուշերի ճանապարհներով» գրքի շնորհանդեսին էլ ներկա էիք, ելույթ ունեցաք, ուրեմն՝ հասկացած պիտի լինեք, որ ես, թեև հայրենիքից հեռու, ուրիշ կենսակերպ չեմ կարող ունենալ: Ապրում եմ այնտեղ, բայց ուշք ու միտքս՝ այստեղ ու Արցախում: Ու երբ հարկ է լինում՝ գալիս եմ:*

Բ. – Բարեբախտաբար հաճախ եք գալիս և այսուհետև ավելի հաճախ պիտի գաք: Չե՞ք ձանձրանում երկար ճանապարհից, ինքնաթիռներից:

Կ.- Հայրենի տուն վերադարձողը չի ձանձրանում, միշտ շտապում է: Ինքնաթիռը տուն բերող պանդուխտի ձին է: Այստեղից գնալիս եմ ձանձրանում ու հենց ինքնաթիռում մտածում, թե երբ եմ նորից գալու:

Բ.- Ամեն գալով իրագործում եք մի լավ նպատակ, կատարում ամերիկահայ մեր բարերարների մի կարևոր հանձնարարական: Այս անգամ ի՞նչ նախաձեռնությամբ եք եկել:

Կ. – Եկել եմ սովորական պարտականություններս կատարելու: Մեր կազմակերպության հավաքած և իբրև օգնություն ուղարկած ապրանքները մաքսազերծելու խնդիր կար: Սրանից զատ՝ կա Հայաստանը, Արցախը և Գուրգեն Մելիքյանին կարոտելու, նրա կատարած բարի գործերը նորից տեսնելու, մեր չքնաղ հայրենիքով ու նրա նվիրյալ զավակներով հրձվելու խնդիր: Մեր իրականանալիք երազները, հայության ազգային ոգին ու բաղձանքն են խտացած նրա մեջ: Մեր աչքի առաջ նա սերունդների համար պատմություն է ստեղծում:

Այս հրաշք հայորդուց ես նոր լիցքեր եմ ստանում, հույսի մեծ պաշար:Իր հիմնադրամի գործերում նա վստահելի է ու թափանցիկ. Թաքուն ոչինչ չի անում, գործում է բաց, միայն բանկային համակարգի միջոցով ստացած գումարի կտրոնը տալիս է և թերթում՝ հենց «Բարեգործում», հրապարակում է ստացած գումարներն ու ծախսելու նպատակները: Սրա համար էլ հիմնադրամի նվիրատուները չեն նվազում, հավատում են ու վստահում: Մինչդեռ Ամերիկայում մարդիկ են հայտնվում, դրամահավաք են կազմակերպում, ոչ գրավոր զեկույց են տալիս, ոչ բանկային փաստաթուղթ, չես իմանում՝ գումարն ո՛ր գնաց, ինչ եղավ, ինչ նպատակի ծառայեց: Հենց սա էլ սիրելի է դարձնում մեր հիմնադրամն ու Գուրգեն Մելիքյանին:

Հաճախ եմ եղել Արցախում և տեսել գործունեության արդյունքը: Մեծ երևույթ է ծառատունկը. Արդեն բերքատու են պուրակների և ճամփեզրի ծառերը, գեղեցկություն ու բարիք են դրանք, բայց ծառատունկը փոքր բան է կովերի ծրագրի համեմատ: 360 կով է տրվել Քաշաթաղի շրջանի բնակիչներին, որոնք այդպիսով ունեն սնունդ և իրենց երեխաներին հայրենի հողի վրա պահելու միջոց: Իսկ բարեգործական մյուս ծրագրերի ու միջոցառումների մասին էլ դեռ չեմ խոսում:

Բ.- Ձեզ Երևանում տեսնում ենք ամեն սեպտեմբերի սկզբին. Ինչո՞ւ եք նախընտրում այդ ժամանակը:

Կ.- Դա ուսումնական տարվա սկիզբն է, ուսանողների վարձավճարները մուծելու ժամանակը:

Բ.- Պարոն Կյուրեղյան, հույս ունենք, որ մեր հանդիպումները կդառնան ավելի հաճախակի. Չէ՞ որ Դուք արդեն հոգաբարձության խորհրդի լիազորություններով օժտված, վճիռ ու որոշում կայացնող անհատականություն եք:

Կ.- Ես էլ ձեզ նման մեկ ձայն ունեմ և կատարելու եմ իմ պարտքը, որի մասին քիչ առաջ խոսում էինք:

Բ.- Մեր ձայները միավորելու ենք, վճռելու ենք միասին: Հուսանք, որ մեր համագործակցությունն այսուհետև ավելի արդյունավետ կլինի կարիքավոր ընտանիքների և ուսանողների համար, մեր աշխարհի շենացման ու հզորացման համար:

Ուրեմն՝ բարի ճանապարհ ու վերադարձ:

Մնամ սպասող՝ «Բարեգործ»

¶ÈÊ ² ì àð ÊØ´ ² ¶ Æð ` ê ² Øì º ÈØàôð ² ¸ Ú² Ü

µ³ Ý. · Ç̈ . ¹ áÏ ï áñ, å ñáý »ëáñ

ÊØ´ ² ¶ ð ² Î ² ¼Ø`

² ì ² ¶ Ú² Ü ² ,   µ. · . ¹ ., å ñáý »ëáñ

Øº ÈÆøÚ² Ü ¶ ,   µ. · . Ã., å ñáý »ëáñ

ê ² ü ² ðÚ² Ü ² Èį   å . · . Ã,, å ñáý »ëáñ

Ê Ùµ³ · ñáõÃÛ Ý Ñ³ ëó»Ý`

º ñ¨ ³ Ý 375025, ² µáí Û Ý 52 ² , Ñ³ Û µ³ Ý³ uḫ - ñáõÃÛ Ý ý ³ Ï áõÉ »ï ÇÙ³ ëÝ³ ß»Ýù, 215 ë»ÝÛ Ï :

Ð»é.ª 060 710 629, 055 – 52 - 29 – 36, 55 - 25 – 37, 52 - 29 – 36

Ð³ Ù³ ñÇß³ ñí ³ Í ùÁ ¨ Ó¨³ í áñáõÙÁª

ê. Øáññ³ ¹ Û ÝÇ:

î å ³ ù³ Ý³ ÏÁ` 99: Â»ñÃÁ µ³ Å³ Ýí áõÙ¿ ³ Ýí ×³ ñ: